4047

1909

491·99-8
Б-42

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱՇՃԵԱՆ ԳՐԱՏԱՆ

ՆԵՐՍԷՍ Ս. ՄԷՋՊՈՒՐԵԱՆ

# ԱՌԱՋՆՈՐԴ
## ՀԱՅ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ

ԿԱՄ

## ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ
## ՆՈՐ ՔԵՐԱԿԱՆ

Ի ՊԷՏՍ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶԻ ՏՂՈՑ

16 ՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԳԻՆ [illegible] ՂՐՇ.

Կ. ՊՈԼԻՍ
Տպագր. ԶԱՐԵՀ Ն. ՊԷՐՊԷՐԵԱՆ
1909

252
№ 2002
491.99-8
Մ-42
2010

491.99-8
Մ-42

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱՇՃԵԱՆ ԳՐԱՏԱՆ

ՆԵՐՍԷՍ Ս. ՄԷՋՊՈՒՐԵԱՆ

# ԱՌԱՋՆՈՐԴ
## ՀԱՅ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ
ԿԱՄ
## ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ
## ՆՈՐ ՔԵՐԱԿԱՆ

Ի ՊԷՏՍ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶԻ ՏՂՈՑ

16ՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. ՊՈԼԻՍ
Տպագր. ԶԱՐԵՀ Ն. ՊԷՐՊԷՐԵԱՆ
1909

33 215-Ա. Լ.

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

Առաջնորդ Հայ Ընթերցանութեան կամ պատկերազարդ Նոր Քերականս որ իւր տեսակին մէջ առաջինն հանդիսացած է, տասնեւվեց անգամ ի լոյս ընծայեալ է հազարաւոր օրինակներով։ Սակայն զանազան պատճառներով բաւական ատենէ ի վեր զրկուեցաւ Հայ Մանկութիւնն սոյն օգտակար գրքոյկէն, թէեւ անընդհատ թախանձանօք կը խնդրէին եւ կը խնդրեն ցարդ տեղացի եւ մանաւանդ գաւառացի ազգայինք, որով հարկ եղաւ մեզ վերատպել սոյն կարեւոր գործն յօգուտ մանկան եւ մանկուհւոյն։

Այժմ կ՚արտօնենք տալ տպագրութեան Գրավաճառ Աճնեան Յովհան Էֆէնտիի։

Մ. ՄԷՋՊՈՒՐԵԱՆ

ՀՍՍՀ-СОРА
1369/40
16782-58



ա բ գ դ ե զ

է ը թ ժ ի լ

խ ծ կ հ ձ ղ

ճ մ յ ն շ ո

չ պ ջ ռ ս վ

տ ր ց ւ փ ք

օ ֆ

1 2 3 4 5 6 7 8 9 0

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ա | Բ | Գ | Դ | Ե |
| Զ | Է | Ը | Թ | Ժ |
| Ի | Լ | Խ | Ծ | Կ |
| Հ | Ձ | Ղ | Ճ | Մ |
| Յ | Ն | Շ | Ո | Չ |
| Պ | Ջ | Ռ | Ս | Վ |
| Տ | Ր | Ց | Ւ | Փ |
| | Ք | Օ | Ֆ | |

ա բ գ դ ե զ է ը
թ ժ ի լ խ ծ կ հ
ձ ղ ճ մ յ ն շ ո
չ պ ջ ռ ս վ տ ր
ց ւ փ ք օ ֆ

Ա Բ Գ Դ Ե Զ Է Ը Թ
Ժ Ի Լ Խ Ծ Կ Հ Ձ Ղ
Ճ Մ Յ Ն Շ Ո Չ Պ Ջ
Ռ Ս Վ Տ Ր Ց Ւ Փ
Ք Օ Ֆ

# ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

## ԴԱՍ Ա.

### ԱՅԲ ՈՒ ԲԵՆՔ

աբգ. դեզ. էըթ. ժիլ.
խծկ. հձղ. ճմյ. նշո.
չպջ. ռսվ. տրց. ւփք.
և օ ֆ։

## ԴԱՍ Բ.

### ՁԱՅՆԱԿԻՑՔ

բպփ. գկք. դթտ. եէ. զս. ժշ. խղ.
ծձց. հյ. ճչջ. մն. ոօ. ռր. վւ. փֆ

### ՆՄԱՆԱՁԵՒՔ

ատ. բր. գդ. եէ. զղ. ժծ. իխ.
հճ. յց. շչ. ու. և։

## ԴԱՍ Գ.

### ՄԻԱՎԱՆԿ ՀԵԳ

բա գա դա զա թա ժա լա խա ծա
կա հա ձա ղա ճա մա յա նա շա
չա պա ջա ռա սա վա տա րա ցա
ւա փա քա ֆա

բե գե դե զե թե ժե լե խե ծե
կե հե ձե ղե ճե մե յե նե շե
չե պե ջե ռե սե վե տե րե ցե
ւե փե քե ֆե

բէ գէ դէ զէ թէ ժէ լէ խէ ծէ
կէ հէ ձէ ղէ ճէ մէ յէ նէ շէ
չէ պէ ջէ ռէ սէ վէ տէ րէ ցէ
ւէ փէ քէ ֆէ

բը գը դը զը թը ժը լը խը ծը
կը հը ձը ղը ճը մը յը նը շը
չը պը ջը ռը սը վը տը րը ցը
ւը փը քը ֆը



բի գի դի զի թի ժի լի խի ծի
կի հի ձի ղի ճի մի յի նի շի
չի պի ջի ռի սի վի տի րի ցի
ւի փի քի ֆի

բո գո դո զո թո ժո լո խո ծո
կո հո ձո ղո ճո մո յո նո շո
չո պո ջո ռո սո վո տո րո ցո
ւո փո քո ֆո

բօ գօ դօ զօ թօ ժօ լօ խօ ծօ
կօ հօ ձօ ղօ ճօ մօ յօ նօ շօ
չօ պօ ջօ ռօ սօ վօ տօ րօ ցօ
ւօ փօ քօ ֆօ

---

աբ ագ ադ ազ աթ աժ ալ ախ ած
ակ ահ աձ աղ աճ ամ այ ան աշ
աչ ապ աջ առ աս ավ ատ ար աց
աւ ափ աք աֆ

եբ եգ եդ եզ եթ եժ ել եխ եծ
եկ եհ եձ եղ եճ եմ եյ են եշ
եչ եպ եջ եռ ես եվ ետ եր եց
եւ եփ եք եֆ

էբ էգ էդ էզ էթ էժ էլ էխ էծ
էկ էհ էձ էղ էճ էմ էյ էն էշ
էչ էպ էջ էռ էս էվ էտ էր էց
էւ էփ էք էֆ

ըբ ըգ ըդ ըզ ըթ ըժ ըլ ըխ ըծ
ըկ ըհ ըձ ըղ ըճ ըմ ըյ ըն ըշ
ըչ ըպ ըջ ըռ ըս ըվ ըտ ըր ըց
ըւ ըփ ըք ըֆ

իբ իգ իդ իզ իթ իժ իլ իխ իծ
իկ իհ իձ իղ իճ իմ իյ ին իշ
իչ իպ իջ իռ իս իվ իտ իր ից
իւ իփ իք իֆ

ոբ ոգ ոդ ոզ ոթ ոժ ոլ ոխ ոծ
ոկ ոհ ոձ ող ոճ ոմ ոյ ոն ոշ
ոչ ոպ ոջ ոռ ոս ով ոտ որ ոց
ու ոփ ոք ոփ

օբ օգ օդ օզ օթ օժ օլ օխ օծ
օկ օհ օձ օղ օճ օմ օյ օն օշ
օչ օպ օջ օռ օս օվ օտ օր օց
օւ օփ օք օֆ



# ԴԱՍ Դ.

## ՄԻԱՎԱՆԿ ՀԵԳ

բու գու դու զու թու
ժու լու խու ծու կու
հու ձու ղու ճու մու
յու նու շու չու պու
ջու ռու սու վու տու
րու ցու փու քու ֆու

բիւ գիւ դիւ զիւ
թիւ ժիւ լիւ խիւ
ծեւ կեւ հեւ նեւ
ղեւ ճեւ մեւ նեւ
շեա չեա սեա վեա
տեա ցեա փեա քեա

# ԴԱՍ Ե.

## ՄԻԱՎԱՆԿ ՀԵԳ

| | | | | |
|---|---|---|---|---|
| մազ | ժամ | ձագ | ցած | խաղ |
| աչք | ծոմ | թաց | ցաւ | իւր |
| քիթ | ճաշ | չոր | դեղ | հին |
| ճիտ | պատ | հող | դիր | նոր |
| թեւ | հայ | քար | դող | թաթ |
| մատ | մազ | ծառ | գեղ | թել |
| ծիծ | մոմ | դեր | գիծ | թեփ |
| փոր | հաց | երգ | գին | զատ |
| մահ | միս | դաս | գիր | նեղ |
| շահ | իւղ | դար | բառ | նոր |
| փոս | կով | ճոթ | բաց | քաջ |
| տաղ | թան | կոթ | բեր | շատ |
| ցեղ | սոխ | կապ | ծափ | շող |
| չար | այս | ծակ | ծեծ | որբ |
| կող | այդ | փոս | ծեր | ուլ |
| ոտք | այն | հոր | կար | չափ |
| պաղ | գող | ծով | լաթ | հոգ |
| հով | սէր | ծոց | լաց | հոտ |
| հազ | հաւ | բան | լաւ | թեմ |
| ողջ | խոզ | գամ | խակ | մեր |



| | | | | |
|---|---|---|---|---|
| ձեր | տող | ճառ | քող | բիծ |
| տէր | վեր | այծ | բակ | թագ |
| տաք | մեծ | վառ | փոխ | թաղ |

---

## ՄԻԱՎԱՆԿ ՀԵԳ

| | | | |
|---|---|---|---|
| լայն | փայտ | կոյտ | շուն |
| կարճ | ջանք | ձեռք | կառք |
| հաստ | գործ | թուք | ուխտ |
| ջուր | գորտ | սիրտ | ձուկ |
| գանձ | գիրծ | մարդ | զէնք |
| լոյս | խելք | ձայն | գայլ |
| մորթ | միտք | խուլ | կոյր |
| բոյն | նայր | ժուփ | դուռ |
| հոտ | մայր | պորտ | թուր |
| քուն | մանչ | գոյն | տանձ |
| տուն | խօսք | սուր | զօրք |

---

| | | |
|---|---|---|
| մուտք | կուշտ | վարձք |
| տուրք | նուրբ | խումբ |
| թուղթ | լեառն | սուրբք |
| ցուրտ | ծունկ | ջուրբք |
| սուրբ | կեանք | կուրծք |

## ԴԱՍ Զ.

### ԵՐԿԱՎԱՆԿ ՀԵԳ

| | | |
|---|---|---|
| աստ ուած | դը ժոխք | ոս կոր |
| յի սուս | կը րակ | սե ղան |
| քրիս տոս | մո խիր | դը գալ |
| ար դար | կար կուտ | ա պուր |
| ա րեւ | անձ րեւ | մա ծուն |
| լու սին | փո շի | պա նիր |
| գի շեր | տը ղայ | հաւ կիթ |
| ցե րեկ | նա ւակ | գի նի |
| առ տու | եղ բայր | քա ցախ |
| իր կուն | հի ւանդ | լե ղի |
| շա բաթ | կըտ րիճ | կը ծու |
| ա միս | գը լուխ | ա նուշ |
| տա րի | ճա կատ | շա քար |
| ա մառ | ե րես | բը րինձ |
| ձը մեռ | ա կանջ | գա րի |
| կա ղանդ | բե րան | ցո րեն |
| ծը նունդ | լե զու | ըն կոյզ |
| զա տիկ | ակ ռայ | կե ռաս |
| եր կինք | պըր կունք | սա լոր |
| գե տին | կըռ նակ | խըն ձոր |



### ԵՐԿԱՎԱՆԿ ՀԵԳ

| | | |
|---|---|---|
| խա ղող | ա ւել | բամ պակ |
| չա միչ | գա ւիթ | ա սեղ |
| շա րոց | տըն տես | մատ նոց |
| աղ քատ | ժամ կոչ | մատ նի |
| հա րուստ | խո րան | կա նանչ |
| ոս կի | կը տոր | կա պոյտ |
| ար ծաթ | պա տառ | դե ղին |
| եր կաթ | բա րակ | կար միր |
| պող պատ | եր կար | ճեր մակ |
| մե լան | մօ տիկ | ծա ղիկ |
| զ՚ան գակ | հե ռու | ոչ խար |
| տախ տակ | խա նութ | կա տու |
| ա թոռ | դեր ձան | մե ղու |

| | | |
|---|---|---|
| մ՚ը սեր | թէ եւ | ա րի |
| ա հա | կար կտէ | սըր տով |
| ձը մեռ | անձ րեւ | աշ խատ |
| կու գայ | ը նէ | ե կիր |
| գը րէ՛ | բա րի | ա մեն |
| կար դա | ջան քով | ի ժիր |

## ԴԱՍ Է.

### ԵՌԱՎԱՆԿ ՀԵԳ

թա գա ւոր
թա գու հի
հայ րա պետ
պատ րի արք
վար դա պետ
քա հա նայ
պա տա րագ
սըր բու թիւն
սար կա ւագ
լու սա րար
տի րա ցու
պա հա պան
ա ւա զան
վա րա գոյր
սա ղա ւարտ
գան ձա նակ
վեր նա տուն
դըռ նա պան
փո խա սաց
ժա մա գիրք
շա րա կան

տօ նա ցոյց
օ րա ցոյց
տա ղա րան
հե գա րան
քե րա կան
դըպ րա տուն
ճե մա րան
վար ժա պետ
դա սա տու
ա շա կերտ
խե լա ցի
ի մաս տուն
խե լօ քիկ
մե ղա ւոր
սա տա նայ
գե րեզ ման
հըր եշ տակ
ո ղոր մած
բա րե կամ
ժա մա նակ
ժա մա ցոյց



## ԴԱՍ Ը.

### ԵՌԱՎԱՆԿ ՀԵԳ

տե սայ ես
մէկ շը նիկ
գա ռան պէս
աղ ու ո րիկ
ի՜նչ փայ լուն
ա չիկ ներ
ու պըզ տիկ
թա թիկ ներ։
ո՛ր չափ ալ
կըր թեալ էր
գի տես, գար
ձեռք պագ նէր։
կա՛ն չե ցի,
քով ս ե կաւ.
սի րե ցի,
նըս տե ցաւ։
մեզ նը ման
հաց ու տէ՝
եւ վը րան
շաղ տո տէ։

երբ տե սայ
այս շը նիկ,
զար մա ցայ
ա՛ղ բա րիկ։
հայ րս ին ծի
շատ գր քեր
տայ պի տի
եւ պատ կեր
եւ մէկ շուն
գե ղե ցիկ
ի՜նչ սի րուն
ա նաս նիկ։
երբ տես նէ
իս խե լօք
ալ շառ նէ՞
ար տոր նօք։
աշ խա տիմ
որ ըլ լամ
հեզ ու չիմ
գիտ նա կան։

# ԴԱՍ Թ.

## ՔԱՌԱՎԱՆԿ ՀԵԳ

աստ ուա ծա ծին
ար քա յու թիւն
ե կե ղե ցի
էջ մի ա ծին
լու սա ւո րիչ
ե րու սա ղէմ
կա թու ղի կոս
ե պիս կո պոս
ա ղօ թա րան
նա խա տօ նակ
ե րես փո խան
նա ւա կա տիկ
գե րեզ մա նա նոց
ան մե ղու թիւն
խո հե մու թիւն
բա րո յա կան
աստ ուա ծա պաշտ
ու սում նա սէր
դըպ րո ցա կան
կա ռա վա րիչ

աշ խա տա սէր
վե րա տե սուչ
հա մա րա տես
հա զա րա պետ
համ բե րու թիւն
օ տա րա կան
վա ճա ռա կան
պատ կե րա հան
զին ուո րա կան
տաճ կաս տան ցի
ըն կե րու թիւն
քա ղա քա վար
քըն հա տու թիւն
ա նօ թու թիւն
ան մե ղու թիւն
սե ղա նա տուն
հի ւան դա նոց
իշ խա նու թիւն
տը ղա յու թիւն
տը կա րա միտ



# ԴԱՍ Ժ.

## ՔԱՌԱՎԱՆԿ ՀԵԳ

մի րուն տը ղաս,
եր բոր տես նաս
խեղճ աղ քատ ներ,
աչք մի՛ գո ցեր,
պէտք է գիտ նալ
թէ թըշ ուառք ալ
մեր եղ բայրքն են,
մեզ կա րօտ են.
հա գուստ ու տեստ
խեղ ճին պա հեստ,
ա նօ թի ին
տուր հա ցա գին
ով որ խեղ ճեր
միշտ խը նա մէ,
հան գիստ օ րեր
նա կ՚ան ցու նէ.
տո՛ւր հինգ փա րայ,
աստ ուած կու տայ
քեզ հինգ հա րիւր,
օր մի ալ բիւր։

## ՔԱՌԱՎԱՆԿ ՀԵԳ

ով որ խեղ ճեր
միշտ վը ռըն տեր,
պա տառ մը հաց
ալ չէ գը տած·
ար քա յու թեան
դու ռը ան գամ
ա նո ղոր մի
ա ռաջ գոց ուի։
գը նա տես նել
այն ար ցունք ներ,
որ կը վա զեն
խեղ ճին աչ քէն։
ո ղոր մե ցա՞ր,
— լը սէ ձայնն ալ·
քեզ կեանք մաղ թեց,
աստ ուած լը սեց·
սի րուն տը ղայ,
ով որ ըլ լայ՝
թէ աղ քատ է,
ա նոր օգ նէ։



## ԴԱՍ ԺԱ·

### ՀՆԳԱՎԱՆԿ ՀԵԳ

Քրիս տո նէ ու թիւն
հայ րա պե տու թիւն
բա րե բա նու թիւն
ար ժա նա պա տիւ
յի շա տա կա րան
արք ե պիս կո պոս
կա ռա վա րու թիւն
ա րե ւա ծա ղիկ
ա ւե լոր դա պաշտ
բա նաս տեղ ծա կան
կա տա կեր գու թիւն
հա մար ձա կու թիւն
մե ծա մը տու թիւն
մը խի թա րու թիւն
հա րիւ րա պա տիկ
հա զա րա պա տիկ
ե կե ղե ցա կան
ե րա ժըշ տու թիւն

# ԴԱՍ ԺԲ.

## ՀՆԳԱՎԱՆԿ ՀԵԳ

Բա րի լոյս եղ բայր
Աս տու ծոյ բա րին.
այս օր ի՞նչ հա մար
կու տաս դա սա տու ին
— քը րիս տո նէ ա կան
վար դա պե տու թիւն,
դաս մը պատ մու թիւն,
գը րի վար ժու թիւն։
բայց դու ի՞նչ հա մար
պատ րաս տես այ սօր
— ես հինգ վան կով բառ
կը հե գեմ դեռ նոր։
ո՛ր չափ շնոր հա կալ
կըլ լամ միշտ ձե զի,
թէ որ խը րատ մ՚ալ
տաք սի րով ին ծի։
— ա ղէկ, բայց գի տես
պէտք է որ դու ալ
ա ռան ձին սեր տես,
որ սով րիս կար դալ։



# ԴԱՍ ԺԳ.

## ՎԵՑ ՎԱՆԿՈՎ ՀԵԳ

Ու սում նա կա նու թիւն
ըն թեր ցա սի րու թիւն
ժա մա նա կաց րու թիւն
աստ ուա ծա բա նու թիւն
տի ե զե րա քա րոզ
ե րեք տա սան ամ եայ
պար կեշ տա խօ սու թիւն
ճար տա րա պե տու թիւն
ի մաս տա սի րու թիւն
տը րա մա բա նու թիւն
աշ խա տա սի րու թիւն
բա րո յա կա նու թիւն
մա տա կա րա րու թիւն
հա մա րա կա լու թիւն
տի ե զե րագ րու թիւն
զու ար ճա բա նու թիւն
կեն ցա ղա վա րու թիւն

## ԴԱՍ ԺԴ.

### ՎԵՑ ՎԱՆԿՈՎ ՀԵԳ

Մենք պար տէզ մը ու նինք ,
հոն կայ պէս պէս ծա ղիկ.
վար դն է գե ղե ցիկ ,
այն ի՜նչ հոտ ա նու շիկ.

Պըտ ղա տու շատ ծա ռեր .
հայ րըս ինքն է տըն կեր.
որք գար նան մէջ ծաղ կին ,
պը տուղ տան ա մա ռին .

Վար դի պէս կար մըր ցած
նուռ , խըն ձոր ու կե ռաս
ա մե նուն համն ա նուշ ,
մըռ ցանք տանձ , սա լոր , նուշ։

Աս տուած է ըս տեղ ծեր
պը տուղ ներ , ծա ղիկ ներ ,
զոր մար դիկ վա յե լեն ,
ու միշտ զին քը օր հնեն։



Կի րա կի մը այ գի
հօրս ը սի զիս տա նի ,
երբ հաս նին խա ղող ներ՝
այն հա րուստ ող կոյզ ներ։

Հայ րըս ին ծի ը սաւ թէ
կար դա լըդ լաւ սոր վէ.
որ մեծ նաս ին ծի պէս ,
պար տէզ ներս մշա կես։

Ա մեն օր խե լօք եմ ,
հա մա րըս լաւ սեր տեմ.
աշ խա տիմ ու գը րեմ ,
եւ պա տիժ չը կը րեմ։





# ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

## ՀԵԳԷՐԷՆ ՔԷՆԻՑ

## ԴԱՍ Ա.

### ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ ՏՂԱՅՈՑ

**Ա.**

Երա նի | քե զի, ո՛վ | տը ղայ,
որ | կար դալ | ու | գը րել | կը սով րիս։
Վ՛եր | նա յե, | տե՛ս | եր կին քը, |
որ | Աս տու ծոյ | աթ ո ռըն | է։

Ա րե ւը | իր | փա ռա ւոր | լու սո-
վը | գըլ խուդ | վը րայ | կը ծա գի |
ցո րեկ | ա տեն։

Տե սա՞ր | գի շեր ուան | մէջ | լու-
սըն կան | ու | աստ ղե րը· | ա նոնք |
քեզ | հա մար | լոյս | կու տան։



## ԴԱՍ Բ.

Ո՛վ | տը ղայ, | դար ձուր | աչ քըդ | աշ խար հիս | վը րայ. | տե՛ս, | ինչ-պէս | զար դա րած | է | Աստ ուած | զայն, | ո րուն | մէջ | դու | պի տի | ապ րիս ։

Գա րու նը | քեզ | հա մար | կը | զար դա րէ | իր | գե ղե ցիկ | ծաղիկ-նե րը ։

Ա մա ռը | իր | հաս կեր | և | ա-շու նը | ա նուշ | պը տուղ ներ | կը | պատ րաս տեն, | զոր | դու | վա յե լես ։

Ձը մե ռը | քու | ար տիդ | ար գա-ւէ տու թեա նը | հա մար | կու տայ | մա քուր | ձիւ նը, | և | ա մեն | ե ղա-նակ | անձ րե ւը ։





## ԴԱՍ Գ.

Գը նա՛ | պար տէ զը, | դը նա՛ | դաշ տը, | քըն նէ՛ | ա նոնց | վի ճա-կը, | իմ | ա մեն | ը սած նե րըս | հոն | կը տես նես ։

Տե՛ս | քա նի՛ | ծա ռեր | աղ-ու որ | պը տուղ նե րով | բեռ նա-ւոր ու ած | են, | մի այն | քու | և | նը ման նե րուդ | հա մար ։

Վար դը | կար միր | գոյ նով | կը | փայ լի. | ա նոր | ա նու շիկ | հո տը | դու | պի տի | առ նես ։

Բար ձըր | ծա ռե րը | քե զի | շուք | տա լու | հա մար | ըս տեղծ ուած | են։

Աստ ուած | դը րաւ | ձը մե- րու կը, | դը դու մը | և սե խը | գետ նին | և | ո՛չ | թէ | ծա ռին | վը- րայ, ուր կէ | ի յնա լով | գը լու- խըդ | կը պատ ռէ ին։

## ԴԱՍ Դ.

Ո՛վ | տը ղայ, | հո վը | ա նուշ | ա նուշ | կը փը չէ, | ո րով | զո վա- նաս | ա մառ ուան | տա քու թեան | մէջ։

Ձը մեռ ուան | ցուր տը | եր բոր | մը սե ցը նէ | քեզ, | մի՛ | լար. | կը րա- կը | շու տով | կը տաք ցը նէ. | ցուր- տը | կ'ը նէ | քեզ | ա ռողջ | և | ժիր։

Տե սա՞ծ | ես | ցո րե նը, որ | կը | բուս նի | հո ղին | վը րայ. | ան կէ | ե լած | ա լիւ րով | կը շին ուի | հաց, | զոր | կու տես | դուն։



Աստ ու ած | քե զի | կու տայ | ոչ- խա րը | և | գառ նու կը, | ո րոնց | մի- սը | ճա շա կես, | բուր դը | հա գուստ | շի նես, | և | կա շին | ո տից | ա ման։

Տե սա՞ր | աղ ւո րիկ | թըռ չուն- նե րը, | ա նո՛նք | քեզ | զը ւար ճա ցը- նե լու | հա մար | կ'եր գեն։



## ԴԱՍ Ե.

Ան գամ | մը | չորս | դիրդ | նայէ՛ սի րուն | տը ղայ, ո՞վ | կը տես նես. | քե զի | պէս | մար դիկ. | ա նո՛նք | քու |

հետ | ըն կեր | ըլ լա լու | հա մար | ըս տեղծ ուե ցան։

Հայ րըդ | կամ | ար տը | կամ | շու կան | և | կամ | ուր | որ | է՝ | քու | ապ րուս տիդ | հա մար | կ՚աշ- խա տի | քըր տինք | կը Թա փէ։

Մայ րըդ | տու նը | նըս տած | կե րա կուր | կ՚ե փէ, | զոր | դու | ու- տես. | սա փո րը | ջուր | կը լե ցնէ, | զոր | խը մես. | Հա գուստ | կը կա- րէ | կամ | կը լը ւայ, | ո րով | մար- մի նըդ | պահ պա նես։

Հայ րըդ | քեզ | հա մար | կը տըք նի. | և | կ՚ու զէ | որ | բա րի | տը ղայ | մը | ըլ լաս։

Դըպ րո ցը | քեզ | հա մար | շին ուած է | , որ | հոն | սըր տի | և | մըտ քի | կըր Թու Թիւն | առ նես։







# ԴԱՍ Զ.

Ո՛վ | տը ղայ, | ըսէ | այս | ա մեն | ը սած նե րըս, | որ | քե րա կա նին | մէջ | կար դաս | և | միտ քըդ | պա հես։

Տե՛ս, | Թէ | այս | գիր քը | քե զի | դաս | տը ւո ղը | ո՛վ | է. | վար ժա պե տըդ, | ու սու ցի չըդ։

Վար ժա պե տը | կ՚աշ խա տի | միայն, | որ | սոր վիս | ան կէ. | Թէ | տը ղի | մը | պար տա քը | ի՞նչ | է։

Մը տա ծէ՛ | և | տե՛ս, | ի՜նչ | մեծ | բան | է, | որ | այս | ա մեն | ա ղէ կու- Թիւն նե րը | ըս տեղ ծած | է | Աս տ- ուած | քեզ | հա մար։

Չե՞ս | տես ներ | ոչ խա րը, | չու-
նը, | կա տուն, | որ | քե զի | պէս |
կ՚ու տեն | կը | խը մեն, | բայց | չու-
նին | կա րո ղու թիւն | խօ սե լու, |
գը րե լու | և | կար դա լու. | դու |
բա նա կան | ես, | ա նոնք | ան բան ։



ԴԱՍ Է։

Ի՞նչ | պէտք | է | ու րեմն | որ |
ը նես. | ո՛վ | տը ղայ, | Աս տու ծոյ |
տը ւած | այս | եր ջան կու թիւ նե րը |
վա յե լե լու | հա մար ։



Միայն | ջանք | մը | և | աշ խա տու-
թիւն | մը | պէտք | է | քե զի՝ | բա րի |
մարդ | և | բա րի | քրիս տոն եայ
ըլ լա լու ։

Ո՞վ | կըր նայ | բա րի | ը նել | քեզ. |
— գի տու թիւ նը, | ուս մուն քը, |
դաս տիա րա կու թիւ նը, | զոր |
կ՚ու ս նիս | դըպ րո ցին | մէջ ։

Դըպ րո ցը | քեզ | կը | կըր թէ
այն պէս, | ինչ պէս | որ | կ՚ու զէ, |
Աստ ուած | և | մարդ կու թիւ նը ։

Սի րո՛ւն | տը ղայ, | սի րէ՛ | կար-
դա լը | և | գրե լը. | սի րէ՛ | խե լօ-
քիկ | ըլ լա լը. | մեծ ցաւ | ը սեն |
բա րի | ա նու նով | և | ո՛չ | թէ |
մեծ ցաւ | ե ղաւ ։



# Դ Ա Ս Ը.

## ԱՍՏՈՒԱԾ

Գիտ ցիր | ո՛վ | որ դայ, | թէ երկ նա ւոր | Հայր | մը | և | Տէր | մը | ու նիս, | որ | է | Աստ ուած։

Եր կին քը, | եր կի րը, | մար դը | և | այն | ա մե նը՝ | որ | մեր | աչ-քը | կը | տես նէ | ու | չը | տես-ներ, | Աստ ուած | ը րաւ։

Դուն | ծը նար, | օր | մը | հար-կաւ | պի տի | մեռ նիս. | բայց | Աստ-ուած | ան մահ | ըլ լա լով, | ոչ | ըս-կիզ բըն | ու նի | և | ոչ | վերջ։

Ձը | կայ | մէ կը, | որ | Աստ ուծ-մէ | սուրբ | և | մեծ | ըլ լայ, | վա-սըն | զի | ա մեն քըն | ալ | իր | ձեռ-քին | գոր ծե րըն | են։

Աստ ուած | մի այն | «ըլ լայ» | մը | ը սե լով | ոչ ինչ էն | ինչ | գո յա ցուց | ու | աշ խար հը | զար դա րեց. | ալ | ի՞նչ | ու զէ | չը | կըր նար | ը նել։





# Դ Ա Ս Թ.

## ԱՍՏՈՒԱԾԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ

Տը ղայ | մը | Աս տու ծոյ | ձե-ռաց | գոր ծըն | ըլ լա լով, | պար-տա կան | է | զա նի | պաշ տել։

ԶԱստ ուած | պաշ տե լով | կը | յայտ նենք | թէ | զին քը | կը | ճանչ-նանք | Ա րա րիչ | տի ե զե րաց։

Աստ ուած | է | քե զի | կեանք | տը ւո ղը | և | քեզ | պահ պա նո-ղը, | ո՛վ | որ դայ. | բայց | կ՚ու զէ |

որ | դու | ալ | բա րու թեամբ | աշ-
խա տիս, | որ | հանգ իստ | ապ րիս։

Պաշ տենք | մեր | սուրբ | Աստ-
ուա ծը, | բայց | ինչ պէս | — սի րե-
լով, | որ | ին քըն | ալ | մեզ | սի րէ
ու | եր ջա նիկ | ը նէ։

Մեր | Աս տու ծոյ | վը րայ | ու-
նե ցած | սէ րը | կը | յայտ նենք |
ա ղօթ քով | և | բա րի | գոր ծով։





# Դ Ա Ս Ժ.

## Ա Ղ Օ Թ Ք

Ա ղօթք | սուրբ | խօսք | են, որ |
կ'ը նենք | Աս տու ծոյ | հետ | և | գըլ-
խա ւո րա պէս | Ե կե ղեց ւոյ | մէջ։

Ա ղօթ քով | կ'ա ղա չենք | զԱստ-
ուած, | որ | մե զի | ի մաս տու թիւն
տայ | աշ խար հի | մէջ | և | մեռ-
նե | լէն | ետ քը | ար քա յու թիւն։

Թէ | մըտ քով | ա ղօ թենք | և
թէ | ձայ նով, | Աստ ուած | կը | լը-
սէ. | և | թէ որ | ի սըր տէ | ու |
բա րի | ըլ լայ | մեր | ու ղա ծը, | կը|
շը նոր հէ։

Աստ ուա ծա սէր | տը ղան | ըլ լա-
լու | է | կըր թեալ, | ու սում նա-
կան | և | խե լօ քիկ.

Ե րա նի՜ | այն | տը ղուն, | որ
կ'ըլ լայ | ար ժա նի | Աս տու ծոյ |
շը նորհ քին։



# ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

## ԴԱՍ Ա.

### Ք Ր Ի Ս Տ Ո Ն Է Ո Ւ Թ Ի Ւ Ն

Աս տու ծոյ մեր վը րայ ու նե-
ցած ան չափ սի րոյն նը շան Որ դին
Աստ ուած աշ խարհ ե կաւ։



Յի սուս Քրիս տոս է Աս տու-
ծոյ որ դի, կա տար եալ Աստ-
ուած ու կա տար եալ մարդ։

Քրիս տոս սիր եց խե լօք իկ տը-
ղա քը և օրհ նեց։ Ե րե սուն տա-
րի աշ խար հիս վը րայ կե ցաւ։

Քը րիս տոս խը րատ կու տար
չար մար դոց և ա մե նուն կ'ը-
սէր, թէ որն է ար քա յու թեան
ճամ բան։

Յի սու սի Քրիս տո սի ճամ բա-
նե րը Սուրբ Ա ւե տա րան գը ր-
քին մէջ են. պէտք է զայն կար-
դանք ու պատ ուէր նե րը կա տա-
րենք սի րով։





## Դ Ա Ս Բ,

### ՓՐԿՈՒԹԻՒՆ

Քրիս տոս է մեր տէ րը ու Փըր կի չը։

Մարդ կան մեզ քին հա մար հը րէ ից ազ գէն չար չար ուե ցաւ, լա ցաւ, ա րիւն թա փեց խա չին վը րայ գամ ուած։

Քրիս տոս մե ռաւ տան ջան- քով խա չին վը րայ, թաղ ուե- ցաւ, ե րեք օ րէն յա րու թիւն ա ռաւ գե րեզ մա նէն, ու ազա- տեց մեզ սա տա նա յին գե րու- թե նէն։

Քրիս տոս իր սուրբ յա րու- թե նէն քա ռա սուն օր ետ քը



համ բար ձաւ, ի րեն յի շա տակ թող լով մե զի սուրբ մարմ նոյն և ար եա նը հա ղոր դու թիւ նը։

Քրիս տոս ի րեն փո խա նորդ թո ղուց ա ռաք եալ նե րը՝ օ րոնք ա ռաջ տասն եր կու հո գի է ին. ա նոնց մէ չոր սը գրե ցին Սուրբ Աւե տա րա նը, ու ա մենն ալ բո լոր աշ խարհ քա րո զե ցին։



## Դ Ա Ս Գ.

### ԱՐԴԱՐՔ ԵՒ ՄԵՂԱՒՈՐՔ

Քրիս տոս նո րէն պի տի գայ աշ խար հի վեր ջին օ րը՝

Այն ա տեն մե ռած մար դիկ

պի տի ող ջըն նան Աս տու ծոյ
դա տաս տա նին ա ռաջ նել լե լու։

Դ'ս տաս տա նին մէջ Աս տուած
ցու ցը նե լով մե զի աշ խար հի
մէջ մեր ըրած գոր ծե րը, թէ
որ բա րի կամ ար դար ըլ լանք,
ար քա յու թիւն կու տայ․ և ե-
թէ չար կամ մե ղա ւոր ըլ-
լանք, դը ժոխ քի ան տա նե լի
պա տի ժը։

Ո՜վ տը ղայ, կ'ու զե՞ս ար քա-
յու թիւն եր թալ, ու սում նա-
կան և բա րե կիրթ ե ղիր, ու-
րով ա նոր ճամ բան գըտ նես։

Կ'ու զե՞ս դը ժոխք չեր թալ,
Աս տու ծոյ պատ ուէր նե րը լը-
սէ ու կա տա րէ․







## Դ Ա Ս Դ․

### ԱՍՏՈՒԾՈՅ ՏԱՍԸ ՊԱՏՈՒԻՐԱՆՔԸ

Աստուած Մովսէս մարգարէին ձեռքով տասը պատուէր տուաւ այսպէս։

1․ Ես եմ քու Աստուածդ․ ուրիշ Աստուած չունենաս։

2․ Կուռք չշինես և չպաշտես։

3․ Աստուծոյ անունը փուճ բաներու համար բերան չառնես։

4․ Կիրակի օրը սուրբ պահէս։

5․ Պատուէ՛ հայրդ և մայրդ, որպէսզի աղէկ ըլլաս և շատ ապրիս։

6․ Սպանութիւն մի՛ ըներ։

7. Գէշութիւն մի՛ ըներ։
8. Գողութիւն մի՛ ըներ։
9. Սուտ վկայութիւն մի՛ ըներ։
10. Քու ընկերիդ տանը և ուրիշ ստացուածքին աչք մի՛ տնկեր։

Սի րուն տը ղայ, գիտ ցած ըլ-լաս, ա սոնք դուն կա տա րած կ՚ըլ լաս, երբ որ սըր տանց զԱս-տուած սի րես, ըն կե րըդ ալ քու ան ձիդ պէս։



## ԴԱՍ Ե.

### ՄԱՐԴԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Ո՛վ տը ղայ, Դու մարդ ես



և մին չեւ մե ռած օ րըդ մար-դոց մէջ պի տի ապ րիս. ու րե-մըն ճանչ ցիր մար դա վա րու-թեան կա նոն նե րը։

Գիտ նա լու ես, թէ դի մա-ցի նիդ հետ ի՛նչ պէս խօ սե լու է, բար ձըր՝ թէ ցած ձայ նով։

Խօս ուած քըդ և շար ժուած-քըդ յայտ նի կ՚ը նեն ինչ բը նա-ւո րու թիւն ու նե նա լըդ. ան-վա յել խօսք չել լէն բը նաւ բեր նէդ։

Թէ որ մէ կը քե զի բան մը հար ցը նէ, աղէկ հաս կը ցիր ը-սա ծը, և մար դա վա րու թեամբ պա տաս խա նէ։

Տե՛ս. Աս տուած մէկ բե րան տուած է քե զի և եր կու ա-կանջ, որ քիչ խօ սիս, շատ մը-տիկ ը նես։

Ի՞նչ են պըր կուն քըդ և ակ-ռա նե րըդ. — Եր կու դուռ բե-րա նիդ՝ որ շա տա խօս չըլ լաս, ու րի շին ա ռաջ չը յօ րան ջես և չը թուք նես։

## ԴԱՍ Ջ·

Հայր մը ա ւե լի կը սի րէ այն զա ւա կը, որ կըր թե ալ է։ Ո՛րչափ կ՚ու րա խա նան մար դիկ, ո՛վ տը ղայ, երբ տեսնեն քեզ, որ ճամ բան քա լե լու ա տեն ան կիրթ տը ղոց հետ չես խօսիր, չես խա ղար, չես ծի ծաղիր, այլ ուղ ղա կի տուն կ՚երթաս։

Ի՛նչ սի րուն կ՚ըլ լայ այն տըղան, որ իր մե ծե րը կը պատուէ, և ա նոր բա րի խը րատնե րը սի րով կը լը սէ ու կը կա տա րէ։

Կըր թե ալ տը ղան իր ա պագա յին հա մար կը պատ րաստէ ըն կե րա կան քաղ ցըր կեանք և բա րի համ բաւ։

Ո՛վ տը ղայ· ճանչ ցիր դուն քեզ, որ ըլ լաս ծը նող քիդ աչքին լոյս մը։

Ո՞վ չըսի րեր քեզ, տես նե լով որ նըս տե լու, կե րա կուր ու տե



լու եւ մար դոց մէջ գըտ նուած ա տեն՝ պար կեշտ և կըր թե ալ մար դու մը վա յել կեր պով կը վար ուիս։

Ես տե սայ տը ղայ մը, որ ուտե լու ժա մա նակ հա ցը մա նըր պա տառ ներ կ՚ը նէր. բե րա նը գոց կը ծա մէր կե րա կու րը. սեղա նի վը րայ լուռ և հան դարտ կը նըս տէր. հա գուս տը, ե րե սը, ձեռ քե րը և ոտ քե րը միշտ մա քուր կը պա հէր։

Տը ղայ մը ա մե նուն սի րե լի է՝ երբ պա կա սու թեան մէջ գըտնուած ա տեն իր մե ծե րին խըրրա տին դէմ չըր նե ղա նար։

Պատ ուե լի մէ կը ե ղաւ այն տը ղան. որ ան կիրթ տը ղա յոց հետ ըն կե րու թիւն չէր ըներ, և կը խը րա տէր զա նոնք՝ որ խե լօք ըլլան։

## ԴԱՍ Ը.

Ո՛վ տըղայ, երբ որ մէկը քու սիրտըդ ցաւցընէ, մի՛ բարկանար. այլ ճանչցիր, որ ըրածը յանցանք է։

Գիտե՞ս արդեօք, թէ բարութիւնը կայծակի պէս խորտակելով քեզ՝ մոխիր կը դարձընէ։

Թէ որ հարուստի զաւակ ես, սիրէ՛ աղքատը և գութ ունեցիր անոր վըրայ։

Աղքա՞տ ես. ո՛վ տըղայ, գոհ եղիր վիճակէդ, երջանիկ կ՚ըլլաս. մի՛ նախանձիր հարուստին վըրայ։

Հարըստութիւնը կը փըճանայ օր մը, բայց մարդավարութիւնը կը մընայ իւր համբաւովը։

Ո՛վ տըղայ, կըրթութեամբ երջանիկ կ՚ապրիս։ Աստուած կ՚ուրախանայ բարի վարքիդ վըրայ ու կ՚օրհնէ ըզքեզ.



Հայրըդ մայրըդ ցընծութեամբ լեցուած կը գըգուեն քեզ. պարկեշտութիւնըդ և կըրթութիւնըդ տեսնելով։

Մարդիկ քեզի ընկերանալ կ՚ուզեն. սիրով բարեւներ կուտան, և փափաքանօք կը խօսին քեզ հետ։

Կ՚ուզե՞ս ուրեմըն՝ որ մարդավարութիւն ունենաս. — եղիր անանկ մարդ մը, ինչպէս ըսի քեզի, — ուսումնական, կըրթեալ ու առաքինի։





## ԴԱՍ Ը.

### ՀԱՅՐ ԵՒ ՄԱՅՐ

Տըղայ մը իր հօրը և մօրը զաւակը կ'ըսուի։

Գիտցի՛ր որդեակ, որ տըղայ մը կը ծընանի մօրը գիրկին մէջ, և կը մեծնայ հօրը ձեռքին տակ։

Քանի որ դուն պըզտիկ էիր, մայրըդ քեզի կաթ կուտար, օրօրոցին մէջ կը քնացունէր



քեզ, դարձեալ միշտ ծընողքըդ պիտի խընամեն ըզքեզ։

Հայրըդ քեզ համար կ'աշխատի, գիշեր ցորեկ ալ կ'ըսէ մօրըդ, արդեօք մեր զաւակը աղէկ գրել կարդալ պիտի սորվի՞, պիտի կըրթուի՞, որ մենք ալ ուրախ ըլլանք իր վըրայ։

Սիրելի՛ զաւակ, գիտնաս որ հօրմէդ ու մօրմէդ աւելի քեզ սիրող չի կայ. ուրեմն դուն ո՞րչափ սիրելու ես ծընողքըդ։

Հայրըդ ու մայրըդ սիրելու համար ինչ ընելու ես, գիտե՞ս, մըտիկ ըրէ. միշտ լըսէ անոնց խըրատները. որ քեզի կուտան. խելօքիկ և հնազանդ եղիր. անոնց սիրտը մի՛ ցաւցըներ, և աղօթք ըրէ որ Աստուած երջանիկ ընէ քու սիրելի հայրըդ ու մայրըդ։

Երանի՛ այն զաւակին. որ իր պարտքը կը կատարէ. Աստուած կ'օրհնէ այնպիսի տըղան, իր սուրբ շընորհքը պարգևելով։



## ԴԱՍ Թ.

### ՎԱՐԺԱՊԵՏ

Խոհեմ տըղա՛յ, երբոր լեզու ելար ու քիչ մըն ալ մեծցար, ծընողքըդ խըրկեցին քեզ դըպրատուն, ուր հիմայ կը կարդաս այս համարըդ։

Դըպրատունը խելացի վարժապետներ կան. դուն ալ դըպրատուն երթալով և անոնցմէ դաս առնելով խելացի կ'ըլլաս։



Հա՛յ զաւակ, սիրէ՛ վարժապետըդ որ քու հայրըդ կը սեպուի։

Հայրըդ քեզի համար ապրուստ կը ճարէ. վարժապետըդ ապրուստ ճարելու կերպը կը սորվեցընէ քեզի։

Վարժապետէն կը սորվի տըղայ մը գրել ու կարդալ, և իր պարտքը ճանչնալ։

Ականջ տուր վարժապետիդ, տե՛ս ինչ կ'ըսէ քեզի։

—Գիտնական և իմաստուն եղիր, ո՛վ տըղայ, կարդալ սորվէ, գրել սորվէ, որով անցեալըդ ու ներկայդ ճանչնաս։

Մի՛ ըլլար ծոյլ և չար, որ չըլլաս մեղաւոր, խեղճ ու աղքատ։ Աստուած և մարդիկ երես կը դարձունեն ծոյլ տըղայէն։

## ԴԱՍ Ժ.

### ՅՈՎՍԷՓ ԳԵՂԵՑԻԿ

Յակոբ նահապետ տասներկու որդի ունէր։ Ամենէն աւելի կը սիրէր պըզտիկ Յովսէփը և անոր ծաղկէ կապայ մը կը հագցնէր։ Միւս եղբայրները նախանձելով ծախեցին Յովսէփը Իսմայելացի վաճառականներու։ Անոնք տարին Յովսէփը Եգիպտոս. հոն շատ նեղութիւն քաշեց, բանտ դրուեցաւ, բայց Աստուծոյ աչքը անոր վրայ էր։ Յովսէփ սիրելի եղաւ Փարաւոնին և մեծ պաշտօնի հանելով թէ՛ Եգիպտացիներուն և թէ՛ իր եղբայրներուն մեծ բարիք ըրաւ։ Վերջը իր հայրն ալ Եգիպտոս բերել տուաւ փառաւոր հանդէսով։



## ԴԱՍ ԺԱ.

### ՄՈՎՍԷՍ

Փարաւոն թագաւոր իր զինուորներուն հրամայեր էր որ Իսրայելացիներուն պըզտիկ տղաքն սպաննեն։ Մայր մը իր նորածին տղան երեք ամիս գաղտնի պահեց, վերջը եղեգով օրօրոց մը շինեց, տղան մէջը դրաւ և գետը ձգեց։ Փարաւոնին աղջիկը, որ գետեզերքը պտտելու գացեր էր, զայն ջրէն հանել տալով մեծցուց և անունը դրաւ Մովսէս որ ըսել է ջրէն ելած։

Մովսէս շատ ուսմունք սորվեցաւ, և վերջը Եգիպտոսէն փախչելով գընաց ուրիշ երկիր մը ուր կարգուեցաւ և քառասուն տարի հովուութիւն ըրաւ։



## ԴԱՍ ԺԲ.

### ԵՂԲԱՅՐ

Տեսայ տղայ մը, որ կ'ըսէր իր հարազատին. — Եղբայր իմ, սրտիս խորէն կը սիրեմ ըզքեզ, վասնզի մէկ կաթ ծըծած ենք և մէկ տան մէջ պիտի ապրինք։

Ինչպէս ձեռաց մատները, այն-



պէս ալ եղբայրներ իրարու հետ միաբան և սիրով ըլլալու են։

Ո՛վ տղայ, աշխարհի մէջ քու առաջին և սիրելի բարեկամըդ ու ընկերըդ՝ քու քոյրըդ եւ քու եղբայրըդ են, սիրով վարուեցէք իրարու հետ։

Երբ որ փորձանք մը գայ քեզի ամենէն առաջ եղբայրըդ կը վազէ անկէ ազատել քեզ. հոգւոյդ չափ սիրէ եղբայրըդ։

Որչափ կ'ուրախանան հայր մը և մայր մը, երբ առաքինի և միաբան տեսնեն իրենց զաւակները։

Սուրբ և օրհնեալ է ձեր սէրը քորք և եղբարք. սիրեցէ՛ք զիրար, Քրիստոս ձեզ հետ կ'ըլլայ ամեն ժամանակ։



## ԱՂՕԹՔ ՏԷՐՈՒՆԱԿԱՆ

Հայր մեր որ յերկինս, սուրբ եղիցի անուն քո, եկեսցէ արքայութիւն քո, եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի. զհաց մեր հանապազորդ՝ տուր մեզ այսօր, և թո՛ղ մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց, և մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա զմեզ ի չարէն. զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս. ամէն։





## ԱՂՕԹՔ ԱՌԱՒՕՏԵԱՆ

Հայր իմ երկնաւոր, որ ամէն վայրկեան մեր վրայ կը հսկես՝ գոհանամ զքեն, որ այս գիշեր առանց վտանգի և առանց փորձանաց անցընել տուիր, ու արժանի ըրիր զիս այսօր ալ քու շնորհքներըդ վայելելու։

Օրհնեալ ես դու տէր իմ Աստուած, որ քու առատ ողորմութեամբդ մեր վրայ կը գթաս։ Տո՛ւր ինձ քու շնորհքդ, որ այսօր առանց մեղաց և սրբութեամբ անցունեմ։

Զօրացո՛ւր զիս որ սատանային ամէն որոգայթներուն դէմ դնեմ, և չըլլայ թէ անկէ խաբուելով՝ քու կամքիդ դէմ գործեմ, ու զքեզ բարկացնեմ։

Օրհնէ՛ իմ ծնողքս եւ վարժապետներս, որոնք զիս քու շնորհացդ մէջ կը մեծցունեն և կը կրթեն. ու երկար և երջանիկ տարիներ շնորհէ անոնց։







## ԵՐԵԿՈՅԵԱՆ ԱՂՕԹՔ

Երկիրպագանելով Սուրբ Երրորդութեանդ՝ շնորհակալ եմ, ո՛վ ամենակալ Աստուած, որ այսօր անվտանգ անցունելով, զմեզ այս գիշերուան հասուցիր։

Ողորմէ մեզ և նոյն գութը ունեցիր, որ այս գիշեր ալ ամէն տեսակ գիշերային փորձութիւններէ ազատ ըլլանք. քանզի եթէ քու ողորմութիւնդ մեր վրայէն վերցնես, մենք կ՚ոչնչանանք։

Ներէ իմ այսօրուան գործած կամայ և ակամայ մեղքերուս, և տուր ինձ քու շնորհքդ, որով ամէն տեսակ մեղքերէ հեռու կենալով, արժանի ըլլամ երկրի վրայ քու անսպառ բարեացդ՝ և ի յերկինս սուրբ արքայութեանդ։

ՎԵՐՋ

# ԱՇՃԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

Կ. ՊՈԼԻՍ

ՉԱԳՄԱԳՃԸԼԱՐ ԵՕԳՈՒՇՈՒ, ԹԻՒ 29

ԳՐԱՎԱՃԱՌ-ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

## ԴՊՐՈՑԱԿԱՆ ԶԱՆԱԶԱՆ ԳԻՐՔԵՐ

| | |
|---|---|
| ՀԱՅՈՐԴԻԻՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆԸ, Մ. Շամտանճեան | 3 |
| ՊԱՐՏԷԶ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾ. ԴԱՍՏ., Փ. Հ. | 4 |
| ՓՈՔՐԻԿ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ, Ս. Գաբամաճեան | 3 |
| ՓՆՋԻԿ ՀԱՅ ԱՐՏԱՍԱՆՈՒԹԵԱՆՑ, Ս. Գաբամաճեան | 3 |
| ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԳՐԱԲԱՐ ԼԵԶՈՒԻ, » | 8 |
| ՊԱՏԿ. ԴԱՍԱԳԻՐՔ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ, Ս. Փ. | 2 |
| ՀԱՄԱՌՕՏ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ | 1 |
| ՊՏԿ. ԻՐԱԳԻՏ. ԳՈՐԾՆ. ԵՒ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ, Կ. Ս. Տէմիրճեան, Տարրական | 3 |
| ՆՈՅՆ, Միջին Ա. | 4 |
| » » Բ. | 5 |
| ԲԱՐԵԿԻՐԹ ԱՂՋԻԿ, Ս. Գափամաճեան | 5 |
| ՀԱՏԸՆՏԻՐ ՀԱՒԱՔԱԾՈՅ ԱՐՁԱԿ ԵՒ ՈՏԱՆԱՒՈՐ Ա. և Բ. հատոր, Մ. Գափամաճեան | 10 |
| ԱՌՈՂՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՐԴԱԿԱԶՄՈՒԹԻՒՆ, Գ. Մալաքեան | 8 |
| ԵՐԿՐԱՉԱՓՈՒԹԻՒՆ ՏԵՍ. ԵՒ ԳՈՐԾՆԿ., Վ. Հ. | 6 |
| ԿՐԹԱՐԱՆ ՖՐԱՆՍ. ԼԵԶՈՒԻ, Գ. Մէրտինեան | 3 |
| ԳՈՐԾ. ՆՈՐ ՔԵՐԱԿ. ՖՐԱՆՍ. ԼԵԶՈՒԻ, Ռ. Պօզանեան | 7 |
| ՆԱՄԱԿԱՆԻ, Ս. Գաբամաճեան | 7 |
| ԱՒԵՏԱՐԱՆ ԳՐԱԲԱՐ | 5 |
| ԲԱՌԱՐԱՆ ՏՃԿ — ՀԱՅ, Գասապեան | 5 |
| ԴՊՐՈՑ ԱՆԳՂ. ԼԵԶՈՒԻ, Ա. և Բ. Հատոր | 5 |

Գրատանս հասցէն է՝

در سعادتده

چاقماقجیلر یوقوشنده ۲۹ نومرولی کتابجی اوحان آشجیان افندی یه

2013

4047

ՀՀ Ազգային գրադարան
NL0062561